Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մարտի 21-ի N 406-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ծառայողին (այսուհետ՝ ծառայող) ծառայողական զենք (այսուհետ՝ զենք) և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծառայողական խնդիրների լուծման նպատակով զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացվում են այն ծառայողներին, որոնք անցել են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հատուկ ուսուցման ծրագիրը:

3. Ծառայողին զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացնելու համար հիմք է նրա զեկուցագիրը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, ուղղված ծառայության պետին՝ իր անմիջական ղեկավարի միջնորդությամբ:

4. Օրենքով սահմանված կարգով հատուկ ուսուցումն անցած և այն դրական հանձնած ծառայողի զեկուցագիրը (թույլտվության մակագրությամբ) ու ուսումնական հաստատության կողմից տրված վկայականը ներկայացվում են տվյալ ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու անձին (այսուհետ՝ հերթափոխի տեսուչ)՝ զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները տվյալ ծառայողին հատկացնելու համար: Ծառայողի զեկուցագիրն (թույլտվության մակագրությամբ) ու ուսումնական հաստատության կողմից տրամադրված վկայականը գրանցվում են հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացնելու թույլտվությունների հաշվառման մատյանում՝ համաձայն NN 3 և 4 ձևերի:

5. Զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները ծառայողը հանձնման-ընդունման ակտով ստանում է հերթափոխի տեսուչից:

6. Ծառայողին տրամադրվող զենքի հետ միասին տրվում են զենքը կրելու համար նախատեսված համապատասխան հարմարանքներ, ինչպես նաև զենքի խնամքի համար նախատեսված պարագաներ:

7. Զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացնելու թույլտվությունների հաշվառման մատյանները վարում է հերթափոխի տեսուչը:

8. Պետական կառավարման այլ մարմիններ գործուղված ծառայողին զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացվում են գործուղման վայրի ղեկավարի հիմնավորված միջնորդագրի հիման վրա:

9. Ծառայողի լիազորությունները դադարելու կամ ծառայությունից ազատվելու դեպքում տրամադրված զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները ծառայողը ծառայության վերջին օրվա ավարտին հանձնման-ընդունման ակտով հանձնում է հերթափոխի տեսուչին:

Ձև N 1

Էկոպարեկային ծառայության պետ

_____-ին
(անունը, ազգանունը)

Ջ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը՝ պահելու և կրելու իրավունքով հաշվեցուցակային զենք ստանալու համար:

Զենքի նյութական մասը, պահելու և կրելու կարգը, գործադրելու (կիրառելու) և օգտագործելու իրավական հիմքերն ուսումնասիրել եմ:

Զենքը պահելու անվտանգության պայմաններն աշխատավայրում և բնակության վայրում (բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնողների դեպքում) ապահովում եմ:

Տեղյակ եմ զենքի անօրինական գործադրման (կիրառման) կամ օգտագործման հետևանքների մասին:

_____
(պաշտոնը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)
_____ _____ 20 թ.

«Միջնորդում եմ
հատկացնել հաշվեցուցակային զենք»

_____
(անմիջական ղեկավարի պաշտոնը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

Էկոպարեկային ծառայության պետ

_____-ին
(անունը, ազգանունը)

Ջ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը՝ պահելու և կրելու իրավունքով անձնական պաշտպանության հատուկ միջոցներ ստանալու համար:

Անձնական պաշտպանության հատուկ միջոցների անվտանգության պահանջների պահպանման հիմքերն ուսումնասիրել եմ:

Տեղյակ եմ անձնական պաշտպանության հատուկ միջոցների անօրինական գործադրման (կիրառման) կամ օգտագործման հետևանքների մասին:

_____
(պաշտոնը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)
_____ _____ 20 թ.

«Միջնորդում եմ
հատկացնել անձնական
պաշտպանության հատուկ միջոցներ»

_____
(անմիջական ղեկավարի պաշտոնը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 3

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ՔԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Վկայականի համարը, մակագրված զեկուցագրի ամսաթիվը	Քենքի տեսակը, գործարանային համարը	Ազգանունը, անունը	Պաշտոնը
1	2	3	4	5

Ձև N 4

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Մ Ա Տ Յ Ա Ն

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Վկայականի համարը, մակագրված զեկուցագրի ամսաթիվը	Անձնական պաշտպանության հատուկ միջոցի տեսակը, համարը	Ազգանունը, անունը	Պաշտոնը
1	2	3	4	5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ